

ՄԻ ԱՆՅԱՅՏ ՏԱՂԱԲԱՆ

Ուշագրութեան արժանի է որ տաղա-
րանն իր խրատական տաղերում պատկերե-
լով Հասարակական պարտականութեան գի-
տակցութիւնից զուրկ մարդկանց թերու-
թիւններն ու պակասութիւնները, արձա-
նադրելով նրանց յոռի կողմերն ու վառ-
բարքերը, ձգտել է նրանց առաջնորդել լուս-
նաւոր ուղիներով եւ նրանց սրտերում զար-
թեցնել պարտաճանաչութեան դիտակցու-
թիւնը: Տաղասացը սիրում է բարութիւնն ու
փառութիւնը: Նոյնպէս բարձր է գնահատում
ճշմարտութիւնն ու արդարութիւնը, ընդ
կերտարկութիւնն ու թշնամասիրութիւնը:
Սիրում է նաեւ պարկեշտութիւնը, Համեմ-
տութիւնը, առաքինութիւնը եւ ուշիղ խօս-
քը: Ուշագրաւ է եւ այն, որ ջերմ պաշտպան
է Հանդիսանում Համեստ, առաքինի, աղնիւ-
նի պարկեշտ կանանց արդարացի իրաւունք-
ներին: Ո՞րոհուող է տալիս նաեւ յարգել ու
պատուել ո՛չ միայն մեծերին, այլեւ իմաս-
տուններին, իսկ վատերից, չարերից, զըր-
այարտիչներից, չիմարներից եւ սուտասան-
ներից միանգամայն Հեռու մնալ:

Դանիէլի դրած նիւթերի մէջ առանձին
ուշագրութեան արժանի են գինեմոլներին
յատկացուած տաղերը: Նա դատապարտում
է եւ պախարակում Հարբեցողութիւնը, գի-
նեմոլութիւնը, շնայած որ իր կեանքը զըր-
կաւորապէս անց է կացրել խմելաբանու-
թեանը: Բայց վերջում եկել է այն առողջ
եղրակացութեան, որ գինեմոլութիւնը
«փորձանքի բունն է եւ մահ է բերում արեւ-
շուղին»: Նա գիտէ նաեւ, որ այդ բացասա-
կան յատկութեան պատճառով՝ գինեմոլի
ոչ միայն չի Հատկանում թէ՛ ի՛նչ է խօսում,
այլեւ միշտ ցանկանում է որ շուտ կատարեն
իր ասածները: Այդ պատճառով է կուտում է,
Հաշտյում եւ մարդկանց անուղի վերադա-
րում: Դժբախտ են մանաւանդ գինեմոլի ըն-
տանիքում ապրողները, որոնք Հոգեպէս
միշտ տխուր են եւ թախծոտ:

Իր տաղերով Դանիէլն ո՛չ միայն նկա-

րագրում է գինեմոլեան վատ Հետեւանք-
ները եւ արբեցողի ողբերգական դրութիւ-
նը, այլեւ նրանց տալիս է որոշ խրատներ:

«Հարբեմալով ամէն օր դու անգայտը,
Քեզ կը նետես անշիջանիկ կրակը վառ»
Ինչ օգտու է որ շահ չունի, միշտ էլ վնաս,
Խորձանքի բուն է, մահ կը բերէ քեզ անպատճառ:
Հարբեմալու հասկանում ես՝ ի՛նչ ես խօսում,
Զրկայ պատիւ, ո՛չ մի հոգու չես արժանում»
...Ով որ քեզի մի բան ասի, ասա բարի,
Դու փոխարէն մտքտ պատիւ կը տաս քորիմ»
Լաւք չեղ, որ տմանչե քա խօսքերից,
Նորէն ուղածներդ էլ կ'ուզես շուտ կատարիմ»
Այդ պատիւ չէ, ամօք է հարբեցողի եւմար,
Նախտանքն ու քրիստանքն է իրեն համարք»:

Դիմու սիրահարներին եւ արբեցողներին
երգիչը խորհուրդ է տալիս չափաւոր խմել
եւ պայծառ ու մաքուր ճանապարհից երբեք
չմոլորուել:

«Փա՛ս լաւ է, արբեմալ դու քափաղորես,
Կեանքիդ մա՛տուր ճանապարհը չմոլորես»
Ափսո՛ս գառ քա իսկական միտք-ուղեղիմ,
Բնակութեան խնդր քա՛մալով չցմարես»:

Ուտանաւորի վերջում Դանիէլը պատկե-
րում է նաեւ իր արբեցողական կենցաղը:

«Ո՛վ Դանիէ՛լ, դու հարբեցող ես, քո գրում ես.
Նոյն խմիչից է, որ մեղաւթիմնը կրում ես»
Փաս ուրեմն փորձված ես այս գործերիմ,
Որ մի քանի բառ հարբեցողի խրատում ես»:

Չնայած տաղաբանը խրատում է չխմել,
Հարբել, բայց վերլուծելով ունայն աշ-
խարհի էութիւնը, տարբեր երգ է հնչե-
ցրելուս... Դ

«Թէ տեղը ես ու քա՛մար,
Խմի՛ր գինիմ քրտով վառ»

Որ չես գիտի դու վաղը
Ի՞նչ է գալու քեզ համարք։

Այսուհար դանում է որ այս երազ աշխարհում մարդս ինչպիսի նուաճումներ ու վերելք էլ ունենայ, պատկերը նոյնն է, վերջում ձի բուռ հողք է դառնալու։

Քո՛վ մարդ, ասա՛, դու ո՛վ ես,
Կարծես անհոգ մի ծով ես
Դու ի՞նչ կ'ուզես այնքանի՞նչ
Զե՛ որ մե բուռ դու հող քոք։

Տաղարան Դանիելն իր խրատական մի քանի տաղերով կանգ է առել նաեւ բազմա-
խիւ բնութագրերի խաղաղ կեանքը յուզող
Հասարակական մի այլ չարիքի վրայ։ Դա
խաղաղութիւնն է, որ երջանիկ օջախների
գալթայման պատճառ է հանդիսանում եւ
լատերին դժբախտացնում։ Անա թէ ինչո՞ւ
տաղարանը դատապարտում է խաղամայնե-
րին։

Շուտաւ խաղաղը տագնալ է իր տան մէջը,
Միտ չի բերում Աստուած, Խանի քրոնքն խեղճ-
Իր կամքով իր ունեցածը բաշխում օտարին,
Քո՛ւսա, մղար, տխուր, դատարի մոտում վերջը։
Ղուտար խաղաղ, փոքր դու վատնող, ի՞նչ շոտ է քեզ,
Ինչի՞նչ եկիր ու գողացիր, պինդ պանի քեզ-
Ափսոս արի, տանք հիմքը դու մի՛ խաղաղի,
Եւ ի՞նչպիսի դու մի պարան, ասո՞ք է քեզ։
Դառն արդիւնքով ամեն օր դու կ'աշխատես,
Ինչո՞ք քեզ քշումս ես, վատտեղ կը վատնես։

Մի այլ քառեկով տաղարանը խաղամու-
լին կոչ է անում՝ ո՛չ թիւայն հալոյ վատ ճա-
նապարհից՝ Հեռու մնալ, այլ եւ հապանել այն
վիշապին, որ բուն է դրել իր սրտում, ու
բովհետեւ խաղամուլութիւնը չար խոր-
հուրդներ է տալիս եւ Հարազատներին թրչ-
նամացնում է։

Եւ՛՛ սպանի այն վիշապը, որ բուն է գրել քո սըր-
տումը,
Քո վատտեղաց ու քո կեանքի է խլիտումը,
Թշնամացնում իր արարատներին ու բոլորին
Նա է շարունակ շար խաղամուլներին միշտ դրողը։

Տաղարանը պատկերում է նաեւ լուսար-
կողք խաղամուլների կեանքի վերջին սոս-

կալի տխուր, տառապալից եւ դառն վիճակ,
այսպիսի մտայն գոյներով։

Եւն խաղաղագիր, որ իրենց ունեցած տարվել են,
Եւ ինչպիսի մերկ ու օղակ տառապել են,
Իրենց երկրից ամսանշարիմից շուտ փախել են,
Իսկնց գաւակներին գառն քշումառնում մտան՝,
հնչ,՝

Դանիելն իր բարոյա-խրատական քառ-
եկներում թէպէտ Հիւսիսով չի ծագում,
բայց մարդկանց խրատելով ու խորհուրդ-
նել տալով՝ պատկերում է նրանց թերու-
թիւնները, յուր կողմերը եւ Հասարակական
վատ բարեքեր։

Տաղարանը Դանիելի բարոյա-խրատական
Հետաքրքիր նկարներից մէկն է Աղէքսանդր
Մակեդոնացին եւ Անտոն Շքնաւորը խո-
լովրդով ընդարձակ ոտանաւորը, ուր պատ-
կերանում են Ալէքսանդր Մակեդոնացին,
Անտոն Շքնաւորի գիտուն ճշմարտը եւ այլ
կերպարներ։

Թագաւորը խորապէս տպաւորուած է քա-
ւոր, բայց իմաստուն Անտոն ճշմարտի
կէսնքի խորհրդաւոր պատկերից եւ կենցա-
ղից, աշխարհի ու մահուան էութեան մա-
ւին Հետաքրքիր լուսաբանութիւններ է տա-
լիս։ Նա ծերունի ճշմարտի քարաժայռ ար-
նակարանն օրինակ բերելով՝ ընդգծում է,
թէ այս երազ աշխարհում մարդ էակն որ-
քան էլ Հարստութիւն կուտակի, վերջում
իր բաժինը մի փալաւ է։ Արձանադրում է
նաեւ, թէ ամէն մի արարածի մէկ ոտըն առ
աշխարհումն է, իսկ միւսը՝ Հանդերձեւ-
լում։ Ապա բացատրում է, թէ ո՛վ իր
կեանքում պարկեշտ եւ լուռ է մնում, նա իր
պատիւն է պահպանում եւ պատիւ չաւում,
որովհետեւ Հերանից է, ի՞նչ լինում է։
Վերջում երգին եզրակացնում է եւ դալիս
է այն համոզման, որ կեանքն իր էութեամբ
ունայնուրիւն է։ Տաղի Հիւսուածքի եւ բո-
վանդակութեան մասին դադարաւոր տալու
Համար այստեղ գծենք պատկերը։

Աղէքսանդր Մեծն արեամ,
Որ բազմել էր էմ մեծ գահ,
Բռնակալ Գր. ամենայն տեղ,
Ո՛չ մի ազգից չուներ թա ան։

Խելացի էր ու շատ համձայն,
Խրատելով կը խօսեր ճշտա-
կը խրատելու որդի ամենին,
Չկար ունի տար մի պատճառ:

Խելացի էր գիտուններով,
Փիլիսոփայ էր ծերերով,
Կը յարգէին քաղաքներին
Ու կը մայրենի միշտ երկնիզով:

Ծատ էր լսել պատմութիւնը,
Մամաւանդ, որ գիտութիւնը
Ամտոն ունի ճգնաւորին,
Կ'ուզէր մըտ տեսութիւնը:

Կ'ուզէր տեսնել, վնասակար
Լսել խօսքերը պետական-
Քամի որ շատ էին գովել,
Թէ խօսքերն է իսկական:

Մին օր, որսի ժամանակ,
Հետն էին շատ հետեւակ,
Կը պտըտէր Աղէֆամնայ
Մարեր, ձորեր ու ծովակ:

Հետեւողներին այդ տարում
Տեսաւ մի ծեր քաղաքում
Բազմած՝ համգիստ իր համար,
Իրեն հրրէք չէր մայում:

Հարց է տալիս ծերունուն.
Հի՞մչե՛ս ես անում այստեղ դուն,
Ասա՛ ինձի, իմամաւ,
Կամ քէ՛տ ասա՛ ինձ անունը:

Հետեւ Ամտոն ճգնաւոր,
Կ'ազօթեմ միշտ երկնաւոր.
Անց եմ կացրել իմ կեանքս
Այս քաղաքում բոլորը:

Ասաւ. Հիսի՛ր, ճգնաւոր,
Ծնորդեմով ու տեսար.
Կը փափաքի տեսութեանդ
Աղէֆամնայ քաղաք:

Լուր տամք մօրան, որ շուտով
Այցելութիւն գալ քեզ քով.
Տեսութեանդ կը փափաքի,
Պատուի եմ քեզ շնորհքով:

Ասեց. Հիսի՛ր կամեն է գայ,
Քամգի այստեղ ծախս չկայ.
Այս քաղաքում է, որ ունեն,
Չորս անկիւնը մի տեղ կայ:

Գնացին շուտով լուր տարան,
Թագաւորին իմացրան,
Թէ Ամտոնը մօտեւր է,
Ունի իւր կացարան:

Մի քաղաքում ճգնում է.
Չարչարվելով տէնում է.
Ազօթելով միշտ Աստուծ,
Հշմարտմ գնում է:

Հասանք էր մօտ ուրաւում,
Միրտը մաքուր՝ ասկէտում.
Ասինքն կ'ուզէ հանգիպի
Մի քաղաք քոյն տեսնայ:

Միրով յօծար ընդունաւ,
Չուներ սրտին վիշտ բնաւ.
Ասեց. Հետաւով ասէ՛ գայ,
Ու լուս խոր միտք արաւ:

Այրի ազրը հաւաքեց
Ու մէշտեղում կատակեց.
Ինքը լիպոր մերկացաւ,
Մի հին փալատ շալակեց:

Կայնեցաւ մա շէմքումը,
Մի ոտը դրաւ դրսումը.
Մեծ ու խորունկ մտքերով
Մինն էլ դրաւ մերսումը:

Հգնաւորն անունն էր Ամտոն.
Մի ձեռն էլ դրաւ իրաւուն.
Երկարացրեց միւս ձեռ.
Ու դրաւ ծածուկ մարմնին:

Երբ քաղաքն իմացաւ,
Շուտով տեղիցն անցաւ.
Երբ մօտեցաւ Ամտոնին,
Ուշադրութեամբ մայնեցաւ:

Երբքս մայնեց, միտք դրաւ,
Թէ ճգնաւորն ի՞նչ արաւ.
Տեսն քաղէ լուս մայնեցաւ
Ու քաղաքը եւ դառաւ:

Հետևանքները զարմացան,
Երբ այս ֆայլը հասկացան.
Լուռ ու մուռը են երկուսն էլ,
Ինչու՞ մի քան յիտեցան:

Այդ մտռոն տանգվեին,
Բուռը քրտամց ցուեին.
Հարց տվին թագաւորին,
Նորամբ որ մօտիկ էին:

— Միշտ կ'ազդէր դու տնանդ,
Այդ ճգնաւորի հետ խօսել,
Բայց զարմամբ է, դու ամիսս,
Է՛լ չուզեցիր բան ասել:

Ամսօրնայտ վերադարձար,
Մօտը երբէք դու չկացար.
Ի՞նչ պատահեց մարանից,
Որ հետը դու չգրուցար:

Պատասխանեց թագաւորը.
Հեկեղացի էր ճգնաւորը,
Ունայնութիւն մտ ցոյց տուաւ,
Մտքի առայ նա բռնորը:

Ունեմ նա շատ գիտեալանման,
Խելեղով համեմար պատուաւանման.
Ողջ ամէնը չեն լինելու
Այդ ճգնաւորի գլխի մի հեր:

Նա՛ օրինակ բերեց աշխարհն,
Իր բնաւորան ծայաւ այրն.

Հարստութիւն աշխարհի,
Իր կուտակած ազբաւաբը:

Մէկ ստը մերսն էր, մէկը դրսուս,
Նա խորհրդով ուս էր ասուս,
Որպէս մարդիս մէկ տան այս աշխարհն է
Ու միւսն էլ հանդերձեալսն:

Ներսի ոտն օրինակ է աշխարհը.
Ու դրսինը համդերձեալը.
Ուսի փայլան է իր բաժին,
Անել աշխարհից չի ակնկալը:

Մի՛ ձեռն, որ էր բերանին,
Լուսփնուով բերանին պաշտպանին.
Մի՛ ձեռն էր ծածուկ մարմնայն,
Իրը թէ պատիւն է պահպանին:

Ով իր երկու բերանն ամուր պահեց,
Այս աշխարհից պատիւ շահեց.
Նոյն երկու բերանից է, ինչ լինում է,
Որ Ամսոն ճգնաւորը վկայեց:

Փիլիսոփայք ին վարդապետմանս,
Չհազցեցին իմ մտքերս.
Միայն Ամսոն ճգնաւորն էր,
Որ յայտնեց ինձ ճիշդ բացերնս:

Ունայնութիւն մտ ցոյց տվաւ,
Որ օգուտ չէ աշխարհ բնաւ.
Ո՛չ թէ միայն այս ժողովուրդս,
Նրանք էլ որ իշխաններ ծնուանք:

2

Խնդրոյքի եւ ուրախութեան տաղեր

Տաղասաց Դանիէլից մեղ հասած դրա-
կան ժառանգութեան մէջ կարդում ենք նաեւ
ինչոյքի եւ ուրախութեան տաղեր, որոնց
մէջ նա պատկերել է իրական կեանքի երե-
ւոյթները: Նա գիտէ, որ աշխարհն իր հու-
թեամբ երազային է, անցողական, ուստի
խորհուրդ է տալիս վայելել կեանքը, ապրել
լաւ, ուրախ եւ երջանիկ: Մի հանգամանք
տնտեսական է, որ Դանիէլի ուրախութեան ու
ինչոյքի տաղերը համակուած են սիրոյ,

խաղաղութեան, ընկերասիրութեան, ճշ-
մարտութեան եւ ալ վեհ զաղապարհերով:
Ուշադրաւ է եւ այն, որ նրա թէ՛ բարոյա-
խրատական եւ թէ՛ ուրախութեան ոտանա-
ւորներէն շատերը տարածուել են ժամա-
նակի ժողովրդէ մէջ եւ արտադրուել են ու
պահպանուել որոշ ձեռագիր տաղարաննե-
րում: Դա նշանակում է թէ՛ ժողովուրդը
սիրել է ու տարածել այդ տաղերը:

Փնիլիւի
(Շար. 2)

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ